ՊՍԱՆԵԼՈՒԹԵՐՈՐԴ—ՏԱՐԻ—ԹԻՒ—2332—ՀՈՐԵՔՇԱԲԹԻ—23—ՄԱՅԻՍ—Ն. Տ.—1—ՅՈՒՆԻՍ—1879

ՊԱՏՄԱՆԻՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ համար 10 մէջ.
» » Գաւառաց » 2 Լիրա
Վեցամս. » Կ. Պոլսոյ » 5 մէջ.
» » Գաւառաց » 1 Լիրա
Օտար երկիրներու » 50 Ֆր.
Դրամագլուխը մէկ անգամի համար 3 զուարուչ, երկու անգամի համար 2 զրչ. աւելի անգամներու համար զատ սակարկութիւն կըլլայ։
Իւրաքանչիւր թիւ 40 փարա արժէ։

ՄԱՍԻՍ

ԼՐԱԳԻՐ

ՀԱՆԱՊԱԶՕՐԵԱՅ

ՊԱՏՄԱՆԻՔ

Դուրս գնացած լրագրոյց ճանրու ծախքը խմբագրութեան վրայ է։
Լրագրոյս վերաբերեալ նամակ կամ որ և իցէ գրութիւն խմբագիրը—Տնօրէնին ուղղուի։ Գալաթիա Սանտրքճիրար Ճանտէսի թիւ 198, Նօրս Խան, Մասիսի գրասենեակը։
Ճանրու ծախքը չվճարուած նամակ չընդունուիր։
Զտպուած նամակներ չեն դարձուիր, եւ ետ չեն տրուիր։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ 23 ՄԱՅԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Պուլկարիոյ և Արևելեան Բումելիի նոր կազմակերպութիւնն հաստատութիւն գտնելու վրայ է։ Ռուսք մէկ կողմէ կը մեկնին և քիչ ատենէն այս երկու գաւառներն իրենք իրենց պէսի մնան, ներքին ինքնօրինութեամբ, զոր մեծ տերութիւնք երաշխաւորած են։ Պուլկարիոյ իշխանն Եւրոպիոյ մայրաքաղաքները կը շրջի և քանի մը շաբաթէն հաղիւ հոս պիտի դայ։ Իւր խօսքին նայելով, մինչև յունիս 17 յուսալի է որ Կ. Պոլսէն անցնելով Վառնա երթայ, երբ Ռուսական զօրաց վերջին վաշտերն ալ մեկնած պիտի լինին։ Պուլկարիոյ իշխանը մայրաքաղաքիս մէջ ճիշդ Սերվիոյ եւ Ռումանիոյ նախկին իշխանաց յատուկ եղած արտօնութեամբ պիտի ընդունուի, և վեհ. Սուլթանին հիւր պիտի լինի։ Իւր ծրագիրն է Պերլինի դաշնադրին դործադրութիւնը։ Բայց Պուլկարաց ծայրայեղ մասն այժմէն կը պատրաստուի յեղափոխական շարժմանց, մեծ Պուլկարիա մը հիմնելու համար, իւր մէջ ունենալով Արևելեան Բումելի և Մակեդոնիա։ Այս ծայրայեղները քառասունի չափ մասնախումբեր կազմած են, իրենց կեդրոն ունենալով Սոֆիա, և իրենց ճիւղերը թէ՛ Պուլկարիոյ և թէ Բումելիի մէջ պիտի տարածեն։

Բ. Դուռն Արևելեան Բումելիի մէջ զօրք ղրկելու իրաւունքն առ այժմ չգործադրեց, և կոլոս Ռուսական թերթը կը ծանուցանէ թէ Նամիկ փաշան Լիմասիոյ մէջ Զարին իմաց տուեր է թէ Բ. Դուռն յիշեալ գաւառին վրայ ունեցած իրաւունքէն կը հրաժարի դրամական փոխարինութեամբ մը, այսինքն եթէ Ռումելիա հաճի պատերազմական տուգանքը զեղչել։ Անցեալներն այս զրոյցն անորոշ կերպիւ երևան եկնելուն պատճառաւ Անդղիոյ մէջ բաւական իրարանցում եղաւ, նախաբարութեան հարցում ուղղուեցաւ և Լորտ Սալիսպըրի պատասխանեց թէ Սուլթանը Պերլինի դաշնադրութեան համեմատ Արևելեան Բումելի զօրք ղրկելու իրաւունքն 'ի բաց թողած չէ։ Եթէ կոլոսի տուած լուրն ստոյգ է, Լորտ Սալիսպըրիի յայտարարութիւնը սուտ կելնէ, և Բ. Դրան ու Ռուսիոյ միջև համաձայնութեան և իրարու մեռեռելու զրոյցները կարդարանան, որք ոչ միայն Անդղիոյ այլ և Աւստրիոյ կասկածանաց և անհանդստութեան պատճառ կը լինին։ Չիչի կոմն այս մասին Բ. Դռանէն բացատրութիւն պահանջած է եղեր, սակայն ատուղութիւնը չի խացաւ իր։ Ռուսիա առ այժմ յոգնած, ներքին յեղափոխական շարժումներէ պատակուած, և երմնական տագնապանօք ներուած լինելով՝ չափաւորութիւն ցուցնելու կը պարտաւորի։ բայց իւր հանդիսան աւելի չատ ցատքելու համար է, և ամեն օր կրնայ դուշակել թէ այս երկու հին թշնամի երաց մէջ անկեղծ դաշնակցութիւն մը չկրնար հաստատուիլ։ Երկու կողմն առ այժմ իրարու հետ չափաւորութեամբ վարուելու շահ ունին, և այս է՝ ըստ մեզ՝ լրագրաց ստանց խօսած Ռուսս—Օսմանեան բարեկամութեան ատուղութիւնը։

Դարատաղի կողմը սահմանները դծելու համար ծանր դժուարութիւնք ծագեցան։ Արնավուտները կրակ ըրին սահմանները դծող Եւրոպական յանձնախմբին վրայ, և կը ծանուցուի թէ Դարատաղի իշխանն իւր նախարարներն 'ի խորհուրդ կոչեր է՝ յանձնախմբին Օսմանեան անդամոց կողմէ սահմանաց դծման մասին ցոյց արուած դժուարութեանց վրայ։ Այս խորհուրդն որոշեր է խնդիրը մեծ տերութեանց ներկայելով առաջարկել որ Բ. Դրան քով իրենց աղդեցութիւնն 'ի գործ դնեն, և յանձնախմբին Օսմանեան անդամները փոխուելով աւելի չափաւոր կարծեաց տէր մարդիկ անուանին։ Միւս կողմանէ սահմանագլխոց մեռերն Օսմանեանց և Դարատաղցւոց միջև կռիւներ կը պատահին։ Դարատաղ իւր սահմանները պահպանելու համար մեծ ամբութիւններ չինել և մանաւանդ Բաթիրիան ամրացնել որոշած է, որոյ համար Աղէքսանդր կայսեր օգնութեան դիմելով, Ռուսիոյ պատերազմական նախարարն ապայներ ղրկած է Դարատաղի ամրութեանց յատակագիծերը պատրաստելու համար։ Ռուսիոյ դաշնակիցներն իրենց զօրութիւնը կը վերակաղմեն և Սլավեան տարրը՝ միլիոնաւոր սուիններու, ամուր դիրքերու և պատնէշներու յեցեալ՝ դէպ 'ի իւր իդեալանը կը քալէ՝ առանց լնաւ ունկն դնելու իրեն դէմ եղած բացագանչութեանց։

* * *

Ամատսիկ կարինէն Քուռիէ Տ'Օրիանի դրուած հետաքրքրական նամակին թարգմանութիւնը զոր մեր երէկուան թիւով խոստացած էինք.

"Այս կողմերուն քրիստոնեայ բնակիչները չեն դադրիր Պերլինի դաշնադրութեան 61րդ յօդուածին վրայ խորհելէ, որ զիրենք պիտի պաշտպանէ Բիւրուերուն Չերքէզներուն և այլոց դէմ։ Բայց այդ պաշտպանութեան դալը կուշանայ, և 61րդ յօդուածին դարմանելիք չարիքները նաւագելէ հետև են։ Անդղիական պաշտպանութեան վրայ ալ շատ կը խօսուի։ Բազմաթիւ Անդղիացիք Ասիական Թուրքիան կը պարպեն, բայց մինչև ցայժմ, այդ պաշտպանութեան արդիւնքը չդգացուեցաւ. մինչև անդամ պիտի ըսեմ թէ մահմետականք բնաւ երկիւղ չունին այդ պաշտպանութենէն, թէպէտ երկրին գործոյը մէջ ո՛և է օտար միջամտութեան մը դաղափարն իրենց ինքնուրոյնութիւնը կը վիրաւորէ. բայց այս դդացումը պարզապէս իդէական է։ Ամենէն հեռատես Թուրքերն և ողջամիտ քրիստոնեայք այս կարծիքն ունին. համոզուած են որ Անդղիական պաշտպանութիւնն, եթէ կարենայ հաստատել, քրիստոնէից վիճակին մեծ բարւոքում մը չպիտի բերէ։

"Արդարև, եթէ Անդղիացիք Բիւրդերուն սովորաբար դործած հարստահարութիւնները դադրեցնել ձեռնարկեն, քրիստոնէից նախապատուութիւն տալու երևոյթ պիտի ունենան, որ մահմետականաց հաճոյ չպիտի կրնայ լինիլ։ այն ժամանակ այս վերջինները պիտի դանդատին իրրև հարստահարեալ՝ եթէ դիրենք ուրիշ կրօնքէ մ'եղողներու հետ հաւասարել ուզուի։

"Արդ՝ Անդղիա կրնա՞յ անտարբերութեամբ լսել այդ դանդատները։ Քրիստոնէից դժդոհութենէն վախնալու բան մը չունի, բայց մահմետականաց դժդոհութիւնը կրնայ իրեն վնասակար լինիլ, որովհետև վառօդի հեռաքի պէս՝ Ասիական Թուրքիայէն Հնդկաստան կրնայ անցնիլ։ Անդղիոյ զօրքին կուգա՞յ իւր ուղղակի հպատակներն եղող 40 միլիոն մահմետականաց դառնալութիւնը վիրաւորել քանի մը հարիւր հազար Հայոց հաճոյ լինելու համար, որք իւր պաշտպանեալները միայն պիտի լինին, և յորոց վախնալու բան մը չունի։ Ասոր հաւատալու համար խելքը կորուսած պէտք է լինի մարդ։

"Ահաւասիկ շատ հեռի եմք Հայկական այն հաչակաւոր ինքնօրինութենէն՝ զոր այնպէս մեծաբարբառ խոստացան հասարակութեան դլխներն, որք . . . (Քուռիէ ասկէց անդին կէտեր դնելով՝ "մնացեալը չենք կրնար հրատարակել" կըսէ։)

Քուռիէի նամակագիրը կը սխալի կարծելով թէ փոքր Ասիոյ Անդղիական պաշտպանութիւնը մահմետական ժողովրդոյ վրայ իւր նկարագրած արդիւնքն յառաջ պիտի բերէ։ Ըստ յունիս 4ի դաշնադրութեան, որ Անդղիական պաշտպանութիւնը կը սահմանէ, Բ. Դուռն ինք պիտի զործադրէ բարենորոգումներն. իսկ Անդղիա այդ բարենորոգմանց ընդհանուր ուղղութիւնը միայն պիտի տայ, ինչպէս արդէն ուսնուեցաւ Լորտ Սալիսպըրիի ըրած առաջարկութիւններէն, զորս սակայն Բ. Դուռը մերժեց։ Ուստի, երբ Բ. Դուռն Անդղիոյ հետ խորհրդակցութեամբ փոքր Ասիոյ մէջ բարենորոգումներ դործադրել սկսի և չարաշարագործ Քիւրդերը պատժուին, պէտք կը լինի կարծել՝ ըստ Քուռիէի նամակագրին՝ թէ մահմետականք այս բանը քրիստոնէից նախապատուութիւն տալ պիտի համարին, և փոքր Ասիայէն մինչև Հնդկաստան՝ միլիոնաւոր մահմետականք Անդղիոյ դէմ պիտի դրգռին ու բորբոքին։ Շեմակը խօսելով, մանաւանդ մահմետական մ'անդամ եթէ խելքը չէ կորուսած, այսպիսի արտառոյց խորհրդածութիւն չկրնար ընել։

Մինթէ՝ ինչպէս Տէպա լրագրին ալ իրաւամբ կը դիտէ՝ աւտարակ Քիւրդերն, որք ոչ ազդութեան՝ ոչ ալ կրօնքի դրդռումն ունին, Հայաստանի մէջ Թուրքք դիւրացոյց ալ ինչպէս չեն հասցներ. միթէ երբեք տեսնո՞ւած է որ Քիւրդերը զսպելու և պատժելու պաշտօնով կառավարութեան կողմէ զօրք ղրկուած ժամանակ մահմետականք դանդատած լինին թէ քրիստոնէից նախապատուութիւն կը տրուի, և միթէ կարելի՞ է որ այսուհետև ալ դանդատին՝ երբ պատժուողներն՝ ոչ թէ անմեղներ, այլ անմեղներու տրիւն ծծող չարագործներ, մարդասպաններ, ասարաուներ, միով բանիւ, աերութեան և ժողովրդեան հաւասարապէս ճիստակար անձինք են. և միթէ՝ վերջապէս՝ Անդղիա ինք ևս Հընդկաստանի մէջ այս օրինակ չարագործ մահմետականները չը՞ պատժեր, և միթէ տասը հազար իւր քառասուն միլիոն մահմետական հպատակները դանդատած կամ Անդղիոյ կառավարութեան դէմ դրդռուելով ապրութիւնը՞ն հանած են, որպէս զի իրենց երկրին մէջ 'ի գործ դրուած արդարութիւնը փոքր-Ասիոյ մէջ Օսմանեան կառավարութեան կողմանէ կէս վայրենի ցեղերու վրայ ալ գործադրուելուն համար բարկանան Անդղիոյ դէմ։ Այս հարցումներն ընելը բաւական է խնդիրը լուծելու և Քուռիէի նամակագրին խորհրդածութեան ծիծաղելի անաւղութիւնը ցոյց տալու։

Իսկ դալով հաւասարութեան իրընդրոյն, Քուռիէ ա'Օրիանի նամակագիրը պէտք է գիտնայ թէ հաւասարութիւնը Թուրքիոյ մէջ նոր բան մը չէ որ մահմետական ժողովրդոյ դդացումները վիրաւորի. կառավարութիւնն այդ սկզբունքն ընդունած է անշուշտ վատահ լինելով որ դործադրելի է, և իւր այլևայլ կանոնադրութեանց և մասնաւորապէս վերջերս հրատարակած սահմանադրութեան մէջ անոր համեմատ տրամադրութիւններ դրած է։ Եթէ բան մը կը պակսի, այն ալ այդ սկզբունքին և տրամադրութեանց դործադրութիւնն է. բայց մարդ Քուրիէի թերթակցէն աւելի պարզամիտ պէտք է լինի կարծելու համար թէ հաստատ-

եալ օրինաց գործադրութիւնը փոքր Ասիոյ մահմետականք իրենց դէմ հարստահարութիւն պիտի համարին և պիտի դժգոհին։ Ո՞չ ապաքէն յայնժամ Օսմանեան կառավարութեան պարտքը կըլինի իր դրած օրէնքները գործադրել, և պատժել այն անձինքն, որք այդ օրէնքներէն գոհ չլինելով՝ կառավարութեան անհնազանդ դըտնուին։ Մեք կը մաղթեմք որ այդ օրէնքները լրջաբար գործադրին, չարագործ քիւրդերն և այլ հարստահարիչները պատժուին, փոքր Ասիոյ մէջ հաւասարութիւն 'ի գործ դրուի, կենաց և ընչից ապահովութիւն գոյանայ, և մեր մասին կապահովցընեմք Բուռիէի թղթակիցը թէ իր յարատեւ գուշակութիւններէն և ոչ մին պիտի իրանայ, և թէ մահմետականք՝ դանդաղելէ հետի՝ շնորհակալ պիտի լինին, տեսնելով որ ներկայ վիճակին բարւոքումը քրիստոնէից չափ իրենց ալ օգտակար է։

Բուռիէի թղթակիցը կը սխալի նաև այն ձախող ակնարկութեան մէջ որ կընէ Հայկական ինքնօրինութեան խնդրոյն նկատմամբ։ Հայերն իրաւունք ունէին այդ ինքնօրինութիւնը խնդրելու. դայս ոչ ոք կուրանայ. և գոհ եմք որ Եւրոպական նշանաւոր լրագրաց ամենն ալ 'ի նպաստ այդ ինքնօրինութեան խօսեցան և տակաւին կը խօսին։ Հայք այդ ինքնօրինութիւնն օրինաւոր միջոցներով խնդրեցին, բայց միթէ յանցաւո՞ր են, եթէ Եւրոպա՝ այդ ինքնօրինութեան տեղ Պերլինի դաշնադրութեան 61րդ յօդուածը տուաւ իրենց։ Եթէ Բուռիէի նամակագիրն այն մարդոցմէ է, որք դարձ մ'ինքնին դատելու անկարող լինելով, անուշ-յաջողութեանը կամ ձախողութեանը համեմատ վճիռ կուտան ոնոր օգտակարութեան կամ վնասակարութեան, յարմարութեան կամ անյարմարութեանը նկատմամբ, պէտք է խոստովանիմք թէ կորուսեալ մէկը չէ։ Զեմք ուզեր պատմութիւն դաս տալ Բուռիէի նամակագրին, որ սակայն պէտք է դիտնայ թէ շատ երկիրներու մէջ շատ օգտակար և հնարաւոր ծրագրեր ու առաջարկութիւններ 'ի դերև ելած կամ ուրիշ ձև ստացած են՝ առանց իրենց ներքին արժէքը կորուսանելու, ինչպէս Հայկական ինքնօրինութեան դաղափարն ալ իր արժէքը չէ կորուսած ամեն լրջամիտ և անկողմնակալ անձանց առջև։

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Լոնտրա 3 յունիս

Թայմզ լրագրին իր այս առաւօտեան թուով կը ծանուցանէ թէ Իտալիայէն զատ բոլոր միւս տէրութիւնք Հելլենական սահմանագլխին ուղղութեան համար դեսպանախորհրդոյ մը գումարման նկատմամբ Պ. Վատինկթօնի ըրած նոր առաջարկութեան հաւանութիւն ղրկած են։ Իտալիոյ հաւանութեան ալ ի մօտոյ կսպասուի։ Տէրութիւնք համաձայնեցան որ միաձայն հաւանութեամբ ընդունուած առաջարկները միայն ներկայեն Թուրքիոյ և Յունաստանի։

Այս առաւօտ հասած հեռաձիրք

Փիլիպէ 3 յունիս.

Ցնօրինաց խորհուրդն այսպէս կազմուած է.

Կավրիէլ էֆէնտի Քէրեստէճի ներքին գործոց.

Վիթալիս զօրավար, պատերազմական գործոց.

Պ. Շէմէտ Եղնտական՝ գործոց.

(Ռուսական Քէսաքօֆի գնդապետին եղբայր) Պ. Քէսաքօֆ, դատական գործոց.

Պ. Կրուէյէֆ հասարակային կրթութեան.

Վիլվոլիէ պէյ, հասարակային շինութեանց, երկրագործութեան և առևտրական գործոց։

Ցնօրինաց խորհուրդն այսօր իր սաջին նիստն ըրաւ։

Լոնտրա 3 յունիս.

Օսմ. Քոնս.		11 7/16
Փոխ.	1863	15
»	1869	13 3/4
»	1871	48
»	1872	
»	1873	12 3/4
» Եգիպտ.		
Անգլ. Քոնս		

Փարիզ 3 յունիս.

Օսմ. Քոնս.		11,45
Դաղղ. Քոնս.	3 0/0	82,30
» »	» Նոր	84,60
» »	5 0/0	116,12 1/2

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Նախարարաց խորհուրդը քանի մ'օրէ ի վեր քաղաքային պաշտօնատարաց վերաբերեալ կանոնադրութեան վրայ կը խորհի։

Մայրաքաղաքիս Անգլիական դեսպան Սըր Հ. Լէյարտ այսօր Պրուսայէն մայրաքաղաքս պիտի վերադառնայ։

Այս առաւօտեան Թուրք լրագրաց մէջ հրատարակած պաշտօնական ազդ մը բացարձակապէս կը հերքէ Ռուսական կօլօն լրագրին այն լուրը թէ Նամըդ փաշան Լիվաստիա դանուած ժամանակ Արևելեան Ռումելիի նկատմամբ ինչ ինչ առաջարկութիւններէ ըրեր է Ռուսիոյ կայսեր։

Նախարարաց պատասխանատուութեան կանոնադիրն ինչ ինչ բարեփոխութիւններէ յետոյ նախարարաց խորհրդէն ընդունուելով՝ տեղեկագիրը շինուեցաւ և երէկ իրիկուն Վ. Սուլթանին ներկայացաւ ի վաւերացումն։

Պուլղարիոյ իշխանը Լոնտրայէն Կ. Պոլիս չեկած՝ Հռոմ և Աթէնք ալ պիտի երթայ։

Անդղիոյ երեսփոխանաց ժողովոյ մայիս 26ի նստին մէջ արտաքին գործոց նախարարութեան խորհրդական Պ. Պըրք՝ հարցման մը պատասխանելով ըսաւ թէ Սըր Հ. Լէյարտ պիտի փութայ Բ. Դուռն ստիպել որ դերեվաճառի դէմ Անդղիոյ հետ կընքուելիք դաշնադրութիւնն ստորագրէ։

Թուրք լրագիրք կը ծանուցանեն թէ Բաթէնթայի տրոց կանոնագիրը խմբագրուած է և նախարարաց խորհրդին պիտի ներկայանայ։

Կը կարծուի որ այս կանոնադիրն 'ի մօտոյ գործադրել պիտի սկսի, և առևտրով կամ օ՛ր և է արուեստով զբաղող թէ՛ հպատակաց և թէ օտարազգեաց նկատմամբ գործադրելի պիտի լինի։ Բաթէնթայի կանոնադրութեան հետևանքը պիտի լինի արուեստաւորաց (էնսնաֆներու) խորհուրդներու, քեահեաներու և ուրիշ հին սովորութեանց ջնջումն, որոց տեղ Եւրոպական քաղաքաց մէջ գըտնուածներուն նման առևտրական խորհուրդ մը պիտի հաստատի։

Աթէնքէն կը հեռագրեն թէ պատերազմական նախարարութիւնն հրաման ըրեր է 6,000 աղդային պահապան զօրք շարժական վիճակի մէջ դնելու և Արևմտեան Յունաստանի մէջ ալ բանակեալ մը կազմելու։

Ամերիկայի Միացեալ—Նահանգաց կառավարութիւնը խնայողական պատճառներով Աթէնքի դեսպանութիւնը ջնջեց։

Նորակազմ Պուլղարիոյ իշխանութեան տարեկան եկամուտն առ այժմ 22,606,000 ֆրանքի կը հասնի։ Այս տարի իշխանութեան ծախքերը դոցուելէ եաև, եկամուտէն մէկ ուկէս միլիոն ֆրանքի յաւելուած պիտի դոյանայ։ Ասկից զատ, Ռուսական առժամանակեայ վարչութիւնը 12 ու կէս միլիոն ֆրանքի պղինձ դրամ կը թողու իշխանութեան, որ հասարակային օգտի վերաբերեալ շինութեանց պիտի դործածուի։

Վսեմ. Նուպար փաշան և իր ընտանիքը մայիս 14/26ին Մարսիլիա հասան և անմիջապէս փարիզ դընացին։

Փիլիպէէն եկած լրոց նայելով, Ալէքս փաշան յիշեալ քաղաքը մնանելուն պէս ուղղակի Պուլղարաց եկեղեցին երթալով Յունաց եկեղեցին չերթալուն, ասկէց զատ՝ կայսերական հրամանագրին թուրքերէն պատճէնէն յետոյ Պուլղարերէնը կարդացուելով Յունարէնը չկարդացուելուն վրայ Յոյնք սաստիկ բարկացեր են և Ալէքս փաշային պաշտօնական ընդունելութեան օրն և ոչ մէկ Յոյն ներկայ չէ դանուեր։ Իսկ երէկ եկած հեռագիր մը կը ծանուցանէր թէ Ալէքս փաշան երկուշաբթի օրը Կավրիլ էֆէնտիի ընկերակցութեամբ Փիլիպէի Յունաց մայր եկեղեցին դընացեր և հանդիսիւ ընդունուեր է. յետոյ Մեթրապոլիան Ալէքս փաշան Յոյն երևելեաց մէկ դումարման տարեր է, որով Յունաց գրդռեալ դդացմունքը հանդարտեր է։

Նոյն լուրերը կը ծանուցանեն թէ Փիլիպէի ոստիկանութեան յայտարարութեանը հակառակ, կայսերական հրամանագիրը կարդացուած ժամանակ Օսմանեան դրօշը չէ քաշուեր, որովհետև հասկցուեր է որ Պուլղարք շատ պիտի յուզուէին։ Ալէքս փաշան հրամանագիրը կարդացուած ժամանակ Բալիխաքով կեցեր է։ Հրամանագրին կարդացուելէն եաև ալ Վ. Սուլթանին համար բնաւ կեցցէ չէ պօռացուեր կամ ուրիշ համակրական ցոյցեր չեն եղեր, այլ Պուլղար անհատ մը «կեցցէ Աղէքսանդր Իշխան Վ.օկ.օրիսէ» պօռացեր է։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

ԷՍՀԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ

Երէկ իրիկուն դոցուեցաւ		12,12
Այս առաւօտ բացուեցաւ		12,18
Կէս օրին		12,18
Բուռսլի երկաթուղի	Փր.	46,50
Թղթադրամ	Լիր.	1135

ԸՆԹԱՑԵՔ ԴՐԱՄՈՑ

22 Մայիս

Անգլ. լիրա	դրչ.	109	28
Նապոլէոն ոսկի	»	87	27
Խրիսխոլ Ռուս	»	90	9
Գըրտիկ	»	51	20
Մէճիտիէի տարրերութիւն	»	6	15
Հինգ նոց »	»	15	20
Պղինձ	»	173	20

ԱԶԳԱՑԻՆ

Ինչպէս որ ծանուցեր էինք, ազգային պատգամաւորութիւնն երէկ ժամը 4ին Բ. Դուռը գնաց և չորս ժամու չափ արարողապետին սենեակն սպասելէ եաև՝ Մեծ-Եպարքոսին խորհրդականը նոյն սենեակը դալով Պատգամաւորութեան նպատակն ու խնդիրն հարցուց և նախարարաց ժողովին հաղորդեց։

Եպարքոսին խորհրդականը քառորդ մը յետոյ վերադարձաւ՝ ծանոյց թէ՝ «Պատրիարքն ասկէ առաջ հրաժարական տուած է, և քանի որ նա իւր հրաժարականին վրայ կը պնդէ, պէտք է որ ազգն ուրիշ մ'ընտրէ. իսկ եթէ ազգը չընդունիր անոր հրաժարականն, ինչպէս կըսէք, ուրեմն Պատրիարքին իւր պաշտօնը պէտք է ինքն անձամբ վարէ, վասն զի նախարարաց ժողովը փոխանորդ չընդունիր»։

Պատգամաւորութիւնն ուղեց Մեծ-Եպարքոսին ներկայանալ, բայց խորհրդականը դիտել տուաւ թէ քանի որ ինք յանուն Մեծ-Եպարքոսին և նախարարաց խորհրդոյն կը խօսի, Ն. Բարձրութեան ներկայանալու հարկ չկայ։

Այս պատասխանին վրայ Պատգամաւորութիւնն առաջարկեց որ նախարարաց խորհրդոյ սոյն որոշումը գրով հաղորդուի իրեն։

Խորհրդականը պատասխանեց թէ կընայ հաղորդուիլ։

Գոհութեամբ կը լսեմք թէ բարեգործական Համազգային ընկերութիւնն իւր դրամագլխին հասոյթէն առ այժմ տարեկան 50 ոսկի նուիրեր է Արարատեան ընկերութեան, որպէս զի Հայաստանի մէջ յարմար տեղ մը դպրոց մը բանայ յանուն Բարեգործական ընկերութեան։ Արարատեան ընկերութիւնն ալ Վասպուրականի Հայոց-Ձոր դաւառին ամենէն բազմամարդ Կիմ գիւղին մէջ դպրոց մը բացեր է։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՑ

Դերջանէն մեզ ուղղուած հետևեալ նամակն այնպիսի դառն վիճակ մը կը նկարագրէ, որոյ վրայ անհնար է խորին ցաւ չզդալ և լռութեամբ անցնիլ։ Հայաստանի այս կարևոր մասին մէջ ազգային իշխանութեան անկերպարան՝ կամ լաւ ևս է ըսել՝ յոռի կացութիւնն, ինչպէս նաև ազգային դատարակութեան ամենայեռնեալ վիճակն՝ անթիւ չարիք կը պատճառեն տեղւոյն Հայ ժողովրդեան, որ իւր բոլոր յոյսը Կ. Պոլսոյ վրայ դրած է, ուստից կ'ըսպասէ ուղղութիւն և լոյս։ Եւ արդարև նամակին տուած մանրամասն տեղեկութիւնները կը ցուցնեն թէ Դերջանու դաւառին Հայ ժողովուրդը բոլորովին զուրկ է այն ուղղութենէն, զոր քիչ շատ իմաստուն և ազդեցութեան տէր առաջնորդ մ'և անոր ստորակարգ եալ իշխանութիւնք միայն կրնան տալ դաւառական ժողովրդեան մը։ Այս տիւր վիճակին հետևանքը սա կը լինի որ ազգային գործերն երեսի վրայ կը մնան, ժողովրդեան իրաւունքներն հարկ եղած պաշտպանութիւնը չեն դտներ, և արդէն կեցած հարստահարութեանց վրայ նոր տեսակ հարստահարութիւնք ալ կ'աւելնան։

Նուիրական պարտք մը կը համարիմք մեզ՝ այս նամակին պարունակութեան վրայ Ազգ. վարչութեան խորին ուշադրութիւնն հրաւիրել, որպէս զի փութայ հարկ եղած տնօրինութիւններն ընել. լաւ առաջնորդ մը կամ դէթ առաջնորդական տեղապահ մը ղրկէ Դերջան, ծանուցեալ գեղծմանց և գայթակղութեանց հարկաւոր քննութիւն բանայ, մասնաւորապէս դաւառին ինքնակոչ առաջնորդին արարքներն անաչառ քննութեան մ'ենթարկէ և զարժանը տնօրինէ՝ յօրինակ այն անպիտան եկեղեցականաց, որք իրենց սրբազան պաշտօնը չճանչնալով, կը կարծեն թէ հարստութիւն գիտցուլու կամ իրենց որովայնը պարարելու համար միայն ղրկուած են դաւառներն. եկեղեցականներ, որք դիտաւոր հաբաստահարիչը կը լինին այն խեղճ ժողովրդեան, զոր հարստահարութենէ պաշտպանելու կոչումն ունին։ Վերջապէս, յանուն Դերջանու տարա-

բաղդ Հայ ժողովրդեան, կը ինդրեմք Ազգ. վարչութենէն որ այդ դաւառին վիճակն ուշադրութեան առնու և ձեռքէն եկածը չխնայէ, որպէս զի ոյժէ և լոյսէ զուրկ դտնուող այդ դաւառն յոյսէ ալ չզրկուի, ինչպէս կը վախնայ մեր թղթակիցն, համոզուած լինելով թէ Դերջանայ պէս թշուառ և անտէրունջ դաւառի մը վիճակը հոգալ՝ նուիրական անհրաժեշտ պարտականութիւն մ'է կեդրոնական վարչութեան։

Միանգամայն հարկ կը համարիմք յիշեալ դաւառին մէջ դաստիարակութեան ամենատխուր վիճակին վրայ այն ազդօգուտ և բարեկեան ընկերութեանց ուշադրութիւնն հրաւիրել, որք Հայաստանի մէջ ուսումն ու կրթութիւն ծաւալելու ազգասիրական փութմ գործն իրենց նպատակ ընտրած են։ Մեր թղթակիցը կըսէ թէ Դերջանու դաւառին մէջ դպրոց բնաւ չկայ, ինչպէս նաև կարդալ գրել գիտցող։ Կրնա՞յ դանուիլ ասկէց աւելի յեսադէմ վիճակ, կամ կրնա՞յ ցուցուիլ դաւառ մը, ուր ուսման և կրթութեան պէտքն ասկէ աւելի զգալի լինի։ Ուստի կը կարծեմք թէ յիշեալ ազգային ընկերութիւնները խիստ գովելի գործ մ'ըրած կը լինին եթէ ջանան իրենց գործողութեան շրջանակը Դերջանու դաւառն ալ տարածել՝ առ այժմ դէթ մէկ դպրոց մը հաստատելով, և այսպէս օգնութեան ձեռք կարկառել մեր քանի մը հազար ազգայնոց, որք ուսման և կրթութեան ծարաւը կզդան, և իրենց բոլոր յոյսը Կ. Պոլսոյ, այսինքն ազգային յառաջդիմութեան կեդրոնին վրայ կը դնեն (*)։

20 ապրիլ 1879 Ի Դերջան

. . . Խմբագիր Տէր.

Արտագին յարդանքս կանխաւ նուիրելով՝ հետեւեալ յօդուածս Ձեր ազգօգուտ լրագրոյ մի անկիւնը հիւրընկալելնիդ յատկապէս կը խնդրեմ։

Դերջան դաւառին անունը դուն ուրեք կամ հազիւ կը տեսնուի լրագրաց մէջ։ Ուղղութեանս առեն երկու ամիս յիշեալ դաւառին մէջ մնալու պատեհութիւն ունենալով, ստանօր ցաւ Ի սիրտ տեսածներս պիտի գրեմ, և կը խնդրեմ որ Ձեր ազգասիրական դիտողութեամբք հանդերձ՝ դայս Պատրիարքարանի ու Ազգային Կեդր. Վարչութեան բարձր ուշադրութեանը յանձնելու շնորհ ընէք։ Անկարելի եղաւ ինձ ալ կոսուր զգացումներս զսպել և անկարելիր մնալ այս տարաբաղդ դաւառիս ցաւալի վիճակին վրայ. եթէ թշուառ դաւառաց մէջ թշուառագոյն մը կայ՝ այն ալ Դերջանն է։ Դերջանը տխուր և իւր շրջակայ դաւառներէն անդամ կարի յետադէմ պտի նիւթապէս, բարոյապէս և քաղաքականապէս։ Ժողովուրդը՝ անցեալ չարաղետ պատերազմին երեսէն աղքատութեան վերջին ծայր թշուառութեան հասած, տեղական կառավարութեան յոռի վարչութեան երեսէն ճանձրացած և յուսահատած, Ղուզիջանի սահմանակից անգութ Քիւրտերու բռնութեանց ու աւարառութեանց չափն ու սահմանը անցած, եկեղեցեաց վիճակը խրթնացեալ և տխուր, դպրոց բնաւ չկայ։ Մինչդեռ դաւառական ներքին բարեկարգութեանց հիմը մտաւորական զարգացումը կը համարուի, գժբաղդ Դերջանայ ներկային ու ապագային վրայ խորհող անդամ չը կայ. այս ամենայն չարիքներն, որոնք կը տառապի ժողովուրդը, լիովին կ'զգայ, և բողոքելով ու պօռալով բերանը բաց կը մնայ. լսող բնաւ չկայ։ Տեղական բողոքներէն ոմանք յօդս կը ցնդին և ոմանք դրուանի տակ կը խեղդուին, և մինչև Ազգ. Պատրիարքարան բողոքելու համար անտէրունջ ժողովուրդը ոչ լեզու ունի և ոչ գրիչ. ըսողը դաւառին մէջ գրիչ բռնող անձ մը չկայ - այս դաւառին ցաւերն ու բողոքները միշտ անցորդ ուղևորներն յայտնած են. ժողովուրդին ամենամեծ բողոքը՝ Կառավարութեան պաշտօնեաներու մէջ դտնուող Ազգային հարստահարիչ պաշտօնէից ազդակործան ընթացքից գէմ է, որոց ահէն ռամիկ ժողովրդին սիրտն ու ձեռքը կը դողդողէ իւր ցաւոց յայտարար բողոքաղիր մը կնքելու. Ի մի բան՝ ժողովուրդը ոչ ոյժ ունի, և ոչ լոյս. եթէ այսպէս մնայ՝ և ոչ խակ յոյս։ Ասկից իրր երեք տարի առաջ Դերջանայ և Կեւոյ անուամբ առաջնորդական պաշտօնով վարդապետ մ'եկած է այսր (անունը Պատրիարքարանը գիտէ) և սուտ ու փուճ խոստումներով թշուառ ժողովուրդը խաբելով, մէկ երկու չաբթուան մէջ իրր ճանապարհի ծախք մէկ երկու հազար դահեկան ու ձի մը կորզելու կը յաջողի և տեղը ճիշդ իրեն յար և նման Կիսն. ու Քաղ. փոխանորդներ կարգելով՝ վերադառնալու խոստմամբ կը մեկնի Ի Կեղի՝ ցարդ անվերադարձ։ Այժմ խեղճ Դերջանցին չդիտեր որո՞ւ դէմ բողոքէ, զինքը խաբելով ստակները, ձին, և դաւազան չինել տալու համար քանի մը կոր արծաթեղէններն ուտող վարդապետի՞ն դէմ, թէ իւր կարդած չարօրինակ փոխանորդներուն դէմ, որոնք ամեն օր տգրուկի պէս ժողովուրդին արեամբ կըսպարարին։ Այն վարդապետն եթէ իրօք Դերջանայ ալ առաջնորդն էր՝ ինչո՞ւ չվերադարձաւ երբէք անդր. իսկ եթէ չէր՝ ի՞նչ իրաւամբ խաբեց զԴերջանցին և անոնց ըստակները, ձին ու արծաթեղէնները կերաւ։ Դերջանցւոց փափաքն այն չէ թէ յիշեալ վարդապետը վերադառնայ Ի Դերջան, չատ բարեբաղդ է որ խաբեբային երեսն անդամ մ'ալ տեսած չէ, այլ թէ որո՞վ համարձակութեամբ աչխարհի առջև այս դերը խաղալու յանդգնեցաւ, և Սափրիչեան Դեր. Տիմոթէոս վարդապետին 1872 Նոյեմբերի վերջերը հրաժարելէն մինչև այս ատեն անհովիւ մնացող ժողովուրդի մը՝ ցարդ ևս անտէրունջ մնալուն պատճառ եղաւ։ Արդեօք Պատրիարքարանն երաշխաւորեալ է այս եղելութիւն։ Յարդ զրկուած առաջնորդներէն ժողովուրդը օգուտ մը չքաղեց։ Եթէ Ազգ. Պատրիարքարանն ու Կեդր. վարչութիւնը կը փափաքին գաւառական ազգայնոց վիճակը բարւոքել, ուշադրութեան առնելու առաջին կէտը՝ զրկուած առաջնորդաց արժանիքը, կարողութիւնն ու ինչ հոգւոյ տէր ըլլալնին լաւ ճանչնալն է, և ըստ պահանջման ժամանակին՝ Ազգային բարեկարգութեան և յառաջդիմութեան նախանձախնդիր և ժողովուրդին բարեկամ վարդապետներ զրկելու են, և ոչ թէ իւրեանց քսակին ու պորտին սոպառաւորներ։ Դաւառիս Ս. Դաւիթ մեծաչէն վանքը աւերակ դառնալու մօտ է. վանքը ազգին տունն է. սակայն վանից մառանները չդիտեմ ո՞ւր են, որ տմբողջ դաւառ մը թեմ ունեցող վանք մը այս վիճակին կ'ենթարկի։ Երբ վանքն այսպէս և բոլոր դաւառիս մէջ դպրոց մ'անդամ չկայ, ժողովուրդին լոյսն ու փրկութիւնը ուսկէ՞ պիտի ծագի։

Ժողովուրդին կենսական ոյժը կրծող քանի մը ցեցեր ըստ քմաց կը գարնեն և խաղան. միշտ իրենց «այսօրը» կը խորհին, ժողովրդեան «այսօրն և վաղը» իրենց բնաւ փոյթը չէ։ Ո՞վ տեսած է արու ժառանգ չունեցող Հայու մ'ի կենդանութեան պտակէն ամուսնոյն՝ առանց պտակի երկրորդ կին մը ևս տալ ժառանգ յարուցանելու համար։ Դերջանայ մէջ այս ալ եղաւ, անցեալ դեկտեմբայ մէջ։ Այս երկրորդ կին առնողը՝ Կոթեր գիւղացի 70 ամեայ Ղէնտիլ անուն հարուստ Հայազգին է, և տուողներն Կոթեցի Ալիքսան աղան և իւր արբանեակներն են, ըսելով թէ «Կ. Պոլսոյ մէջ ալ ասանկ հրամաններ շատ կը տրուին»։ Եթէ իրօք ասանկ նոր հրաման մը կայ, թող ծանուցուի ընդհանուր ազգին, որպէս զի այսուհետև ամուլ ու պառաւ կանանց տէրերը անզաւակ չմնանին. ապա թէ ոչ՝ պէտք է ըստ օրինի պատժուին ասանկ յանդուգները, որպէս զի բարեխիղճ և անմեղ ժողովրդեան քար գայթակղութեան չլինին։ Ալիքսան աղան ի վարձատրութիւն իւր այս ծառայութեան ընդունած է յիշեալ Ղէնտիլէն 8 քաշ ծխախոտ, 12 հատ հարիւրնոց թուղթ և չորս հինգ հազար դահեկանի արժէք ունեցող պարտէզի մը տեղ. 28 հարիւրնոց թուղթ ալ առաջնորդական փոխանորդը։ Ղէնտիլը հիմա կիներուն երկուքն ալ առ իւր կը պահէ, և հասարակութիւնը իւր արդար զայրոյթը դսպելով՝ այս յանդգնութեան նկատմամբ Պատրիարքարանի վաղ ընդ փոյթ անօրէնութեան կ'սպասէ։ Անցեալ մարտի սկիզբները դարձեալ Կոթեր գիւղին մէջ վաճառական Պարսիկ երիտասարդ մը 8—10 ամեայ Հայ աղջիկ մը կը բռնարարէ և գիւղացիք իրողութիւնն ստուգելով կուզեն յիշեալ մարդաճիւաղը ըստ օրինի պատժել տալով՝ գիւղէս ալ ուրբսորել. բայց Ալիքսան աղան, որ միշտ պզտոր ջուր կորոնէ որսալու համար, ո՛ գիտէ ո՞րչափ գումարով հոս ալ կը միջամտէ ի նպաստ Պարսկին և յոգուտ իւր քսակին։ Կ'երեւի որ Ալիքսան աղան ազգութեան և պատուոյ զգացում չունենալով՝ ասանկ խնդիրներն իրեն չահու աղբիւր կը համարի։ Ասանօր երկուք ալ առանց պսակի ամուսիններ կան, (եթէ ամուսնութիւն կրնայ ըսուիլ), որոց մին Էսպէվէրէկ գիւղի և միւսը Տվնիկ գիւղի մէջն է։ Այս վերջնոյն առաջին պսակեալ կինը տակաւին ողջ է, և երկրորդ ապօրինի կնոջմէն երկուք ալ զաւակ ծընած է, ինչպէս որ իւր կինն ալ օտար այրէ մը երկու երեք զաւակ ծնած է։

. . . Խմբագիր Տէր, դաւառիս անտէրունջ վիճակին իրր ապացոյց և մեր դրածներուն իրր փաստ՝ մեր աչքին առջև կատարուած նախընթաց քանի մ'իրողութիւնները բաւ համարելով կը թողում այն բազմաթիւ հարստահարութիւնները, զրկանքներն ու կաչառակրծութիւնները, որոնք խաւարի մէջ կը գործուին և լռութեան տակ կը ծածկուին։ Այս չափ անկարգութեամբ լցուած անհովիւ դաւառի մը մէջ ինչե՞ր չեն պատահիր։ Հիմա խեղճ ժողովուրդը Քիւրդերուն և ուրիշ հարստահարիչներուն զրկանաց հաւացումն ու դարմանն արդարասէր կառավարութեան յանձնելով, առ այժմ վաղ ընդ փոյթ ազգային կեդրոնական պաշտօնէից հիրաններէն ճողոպրելու ճարը կը նայի՝ արդարասէր և անկողմնակալ առաջնորդի մը շնորհիւ։ Քանի որ ազգին ներքին հիմնական բարեկարգման գլխաւոր միջոցին՝ այն է դաստիարակութեան կենսական խնդրոյն լուծման և դպրոցաց հաստատութեան ձեռնարկուած չէ, և քանի որ ժողովուրդն ինքնին պարտուց և իրաւանց սկզբան անտեղեակ է, այս դէպքերը պակաս պիտի չըլլան։ Դերջանցւոյն փրկութեան միակ միջոցը մը տաւորական զարգացումն է։ Դերջանցին ուսման և լուսոյ կարօտ է. իւր առաջնորդները տգէտ և խաւար են. միութեան ու բարեկարգութեան կարօտ է. ազգեցութեան տէր, ազգասէր, ուսումնասէր և բանիբուն առաջնորդի մը կարօտ է, որ այս ամեն չարիքներն ու զեղծումները բառնայ, դպրոցներ հաստատէ ու եկեղեցիները բարեկարգէ և Դերջանցւոյն առջև յառաջդիմութեան դիւրուղի մը հարթէ։

. . . Խմբագիր Տէր, Ի սէր արդարութեան և յօդուտ Դերջանցւոյն, սոյն յօդուածս Ձեր ազատախօս թերթին միջոցաւ Ազգ. Պատրիարքարանի և ընդհանուր ազգին ուշադրութեան ներկայացնելնիդ կրկին խնդրելով, մնամ Դերջանայ փրկութեան և ազգիս յառաջդիմութեան անձկայրեաց

Վ. Մ.

Տփխիսի Մշակ և Մեղու Հայասնի լրագրաց մէջ հետեւեալ նամակը կը տեսնեմք.

Ղարս 27 ապրիլ.

Նորին գերազանցութիւն Լազարէվ գեներալը ներկայ տարւոյս յունվար 27 ամսաթիւ նամակով ուղարկեց մեզ 1200 ռուբլի փող Մոսկուայի Հայ ժողովուրդից ստացած, բաժանելու մեր աղքատ քրիստոնէից, որք յետին ժամանակումս ընտանեօք դուրս էին եկած Ալաշկերտից և Էրզրումից։ Ցառապելոյ խնամատար նորին բարձրը դերազանցութեան այս մարդասիրական կամք ճշդութեամբ ի գործ դնելու համար՝ պարտք եղաւ ինձ նախ Ղարսի նահանգի մէջ եղող գաղթականաց ցուցակը պատրաստել նահանգիս գործակալ քահանայից ձեռքով, իւրաքանչիւր գերդաստանի մարդաթիւն հասկնալու համար։ Մեզ հասած ցուցակներէն ի յայտնուեցաւ որ Կարուց նահանգի մէջ ընդամեն 342 տուն գաղթականք կան, ուր տուն յոյներ ևս ի միասին առնելով։ որոց ամենուն մէջ կը դտնուին 1466 արու և 1320 էգ անձինք, ամբողջ 2786 անձ։ Վերոյիշեալ 1200 ռուբլին ամբողջ գումարին վրա բաժնելով՝ մարդ գլուխ 43 կոպէկ բաժին հասաւ, որոյ համար և սկսեցի բաժանել։

Ցառապեալներէն հաղարաւոր բերաններ այն առաքինասէր աւագ մարդոյ նախանձելի կենաց օրհնութիւններ կարդացին, ընդ որս և աղօթարար է յաւիտեան։

Առաջնորդ Կարուց
Գրիգորիս վ. Աղասանեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Առ համայն Պատ. Թագ. խորհուրդս Պոլսոյ և շրջակայից և Ս. Առաջնորդս դաւառաց.

Ազգային Հիւանդանոցի Հոգաբարձութիւնս նկատելով որ վերջին օրերս Հիւանդանոցի որբանոցի աշակերտաց թիւն այն աստիճան ստուարացած է, որ մինչև 190ի բարձրացած, վարժարանի շէնքն ու մահճակալներն այդքան աշակերտ պարունակելու բոլորովին անբաւական ըլլալնուն, խել մը դժուարութեանց պատճառ և տեղի կը տրուի։ Ասոնց առաջքն առնելու համար որոշեց Հոգաբարձութիւնս ներկայ յայտարարութիւնս ուղղել և խնդրել Պոլսոյ և շրջակայից համայն Պատ. Թագ. խորհուրդներէն, և գաւառաց Ս. Առաջնորդներէն, որ այլ ևս հաճին դադրեցնել հետզհետէ յորբանոց տղայ զրկելու շարունակութիւնը, զի անկարելի եղած է տղայ ընդունիլ մինչև որ նոր տնօրինութիւն մ'ըլլայ։

79 մայիս 21 Ի դիմաց Հիւ. Հոգ.
Ատենապիր Ատենապետ
Տ. Կէ-Գ-Շէրէրան Մէ. Յակոբեան

ԻԼԱՆ

Զարթաղճա խարթիը միւատֆատասը իւղերինեէ իմալ վէ ինչա օլունանաք իհթիյաթը հաղբրի ճէպհանէսինին իչպու մայիս բուվինին իկիրմի ալթընճը ճումա իրթէսի կիւնիւ միւնագասասը իճրա օլունանաղընտան չէրայիթը միւթէֆիրիասընը անլամաք վէ րէսիմլէրինի կէօրմէք իսթէյէնլէրին եէվմի մէզքիւրէ քատար Պապը Սէրասքէրիտէ էսնիյէ քօմիսիօնընա կէլմէլէրի։

22 մայիս 1879

Պապը Սէրասքէրի

(*) Կը լսենք թէ Ախլցխայի Հայ հասարակութիւնը տարեկան 500 ռուպլի հանդանակելով փափաք յայտներ է Արարատեան ընկերութեան որ յանուն Ախլցխացւոց դպրոց մը բանայ Տաւրոսի մէջ։ Դերջանու դաւառն ալ Տաւրոսի մօտ լինելով, կը կարծեմք թէ մեր Ախլցխացի ազնուամիտ ազգայինք չատ օգտակար կերպիւ գործադրած կը լինին իրենց ազգասիրական վսեմ նպատակն եթէ իրենց փափաքն իրացնելով յիշեալ դաւառով Դերջանու դաւառին մէջ դպրոց մը բանալ տան՝ ընդ անօրէնութեամբ Արարատեան ընկերութեան։

Advertisements referring to British or American Goods. etc., are exclusively received for this Paper at
EUG. MICOUD'S Foreign Advertising Agency 139—140, Fleet Street, London.

ԱՅԵՐԻ ՎԻԿՕՐԸ

Ով որ իր մաղերուն թափիլը չուզեր, «Այերի վիկօր» կոչուած մաղի անուշահոտ ջուրին գործածելու է. ուրիշ ամեն տեսակ մաղի ջուրերը կոմբինացիաները՝ որ մաղ չի թափելու համար կը ծախուին, բոլորն ալ անօգուտ են. իսկ վիկօրի օգուտը միլիոնաւոր փորձերով տեսնուած է, և Պօլսոյ ու դաւառաց սէջ օր օրի գործածողներուն թիւը կաւելնայ։ Անոնք որ իրենց մաղերուն գեղեցկութիւնը կորսնցնելու վրայ են, շուտով գործածեն սա ջուրին որ'ի վերջոյ չզղջան։ Թափելու վրայ եղող մաղերը կը հաստատէ ու կամրապնդէ, թափածներուն տեղը մաղ կը բուսցնէ երբոր մաղերուն արմատը վնասուած չէ, ու ճերմկած մաղերը անպատճառ իր նախկին բնական գոյնին կը բերէ, գործածելուն կերպը չիշերուն հետն է. կը ծախուի Կ. Պոլիս Դ. Ղալաթիա Մինասեան և ընկերաց Ամերիկայի Մաղազան։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ԱՂԷՔՍԱՆԴՐ ՎԷՅ

ԹԷ ՈՐ ԱՄՈՒՄՆԱՅՆԵԼՈՒ ԱՂՋԻԿ ՄԸ ՈՒՆԵՆԱՅԻ

Ամեն Հայ գրավաճառաց քով կը գտնուի մէկ քառորդ մէճիտ դնով։

ՄՏԱՄԱՐՁՈՒԹԻՒՆ

ԸՍՏ ԲԷԼԻՍԷԻ

(Մայրենի տա)

ՄԱՄՆ Ա.

ԴԻՊԱՐԸ-ԸՆԴՈՒՏ ԷՐՈՅ ԵՒ ԷՍԿՈՅ

Օրինակը և նիւթը բերանացի և գրաւոր հրահանգայ 5 էն 8 տարեկան տղայոց համար.

Թ. ԹԷՐՔԱՆ

Իւր տեսակին մէջ նոր բայց խիստ կարեւոր գործ մ'է, որով մեծարգոյ հեղինակը մեր ազգային վարժարանաց մէկ մեծ պիտոյքը լցուցած է։ Ինչպէս անունն ալ կը յայտնէ, տղայոց միտքը խորհրդածութեան վարժեցնելու նպատակաւ շինուած գիրք մ'է, զոր մեր ազգային դասախօսակաց ուշադրութեան կը ներկայացնենք։ Գործը 5 մասէ կը բաղկանայ, որք հետզհետէ պիտի հրատարակին։

Կը գտնուի ամեն Հայ գրավաճառաց քով և Բէրա Մ. Վէյսի և Մ. Պօտէնի գրատուները։ Դին 1 ֆրանք.

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱՐԱՆ

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Այս անունով տեսակ մը հրատարակուած է Գալաֆեան տպարանէն, և մէկ քառորդ արժէք մէճիտի կը վաճառի։

Ինչպէս գիտեն ընթերցողք, Հայկական Կրթարանն Օրթագիւղի մէջ հիմնեալ և Հասարակաց Կրթութեան նախարարութենէն հաստատեալ Դուրգէնեան բարեհամբաւ վարժարանն է, որոյ նպատակին, պայմաններուն, ուսմանց և կանոնաց վրայ մանրամասն տեղեկութիւնները կը պարունակէ վերոյիշեալ տետրակը։

ՆՈՐ ԿԵԱՆՔ

Ե. ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

Ա.

ԱԶԳՍՅԻՆ ԼԵԶՈՒ

Ամեն Հայ գրավաճառաց քով կը գտնուի։ Դին 3 1/2 ղրշ մէճիտ։

ԹՄԲԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆ
Կ. Ս. ԻՒՊԻՒՃԵԱՆ



ՇԻՐԲԷԹԻ ԽԱՅՐԻԷԻ

ՇՈԳԵՆԱՒՆԵՐՈՒՆ ԵՐԹԵՒԵԿԻ ԺԱՄԵՐԸ

1879 ՄԱՅԻՍ 1 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՕՐԷՆ ՍԿՍԵԱԼ

ՄԻՆՉԵՒ ՄԱՅԻՍ 31

ԲՈՍՓՈՐԷՆ ԻՋՆՈՂ ՇՈԳԵՆԱՒՆՆԵՐԸ

Ժամ	Լուրջպոլսոյ եղանակ	Թիւ
10 30	Լենինհոպլէն պէյլիքա. Թար. Լենիք. Սթէն. Էմիրկ. Ր Հիսար, Պէպէք, Արնավ. Գուր. (Աժան գնով)։	28
11	Լենինհոպլէն Մէզարոպ. Պէյլիւքտէրէ, Թարապիա, Լենիքէյ, Էմիրկ. Պոյաճ. Ր. Հիսար, Պէպէք։	32
12	Լենինք. Մէզարոպ. Պէյլիւքա. Թարապիա, Լենիք. Սթէնիա, Էմիրկ. Պոյաճ. Ր. Հիսար, Պէպէք։	18
1	Լենինհոպլէն Մէզարոպ. Պէյլիւքա. Թարապիա, Լենիք. Էմիրկ. Պոյաճ. Ր. Հիսար, Պէպէք։	20
2 45	Մէզար, Պէյլիւք. Թար. Լենիք. Սթէն. Էմիրկ. Պոյաճ. Ր. Հիսար, Պէպէք, Արնավ. Գուրուչ. Օրթաք. Պէշիկ.	28
3 15	Ր. և Ա. Գավաղէն Լենինհոպ. Մէզ. Պէյլիւքա. Թար. Լենիք. Սթէն. Էմիրկ. Պոյաճ. Ր Հիսար, Պէպէք, Արնավ. Գուր. Օրթաք. Պէշ։	32
5	Լենինհոպ. Մէզ. Պէյլիւքա. Թար. Լենիք. Էմիրկ. Պոյաճ. Ր. Հիսար, Պէպէք, Արնավ. Պէյլ. Գուզկ. Պէշիկ։	18
6 15	Լենինհոպլէն Պէյլիւքա. Թարապիա, Պէյքօզ, Լենիքէյ, Էմիրկ. Գանլըճա, Ր. և Ա. Հիսար, Գանտիլլի, Արնավ. Զէնկ. Պէյլեր. Օրթաքէյ, Գուզկ. Պէշիկթաշ, Իսկիւտար։	2
8	Ր. և Ա. Գավաղէն Լենինհոպ. Մէզար. Պէյլիւք. Թարապիա, Պէյքօզ, Լենիք. Էմիրկէն, Պոյաճ. Ր. Հիսար, Պէպէք, Արնավ. Գուրուչ. Օրթաքէյ, Պէշիկթաշ։	20
9 45	Մէզարպուրնուէն Պէյլիւքա. Թարապիա, Լենիքէյ, Էմիրկէն, Ր. Հիսար, Արնավ. Օրթաքէյ, Պէշիկթաշ։	22

ԱՐՆԱՎՈՒՏ ԷՆԷՆ

11 30	Արնավուտքէյէն, Գուրուչ. Օրթաք. Պէշիկ. Գասպաթ։	25
12	Արնավուտքէյէն, Գուրուչ. Օրթաք. Պէշիկթաշ։	23
12 15	Պէպէք. Արնավ. Գուրուչ. Օրթաք. Պէշիկթաշ, Գասպաթաշ։	22
1	Արնավ. Գուր. Օրթաք. Պէշիկ. Գասպաթաշ։	25
1 45	Արնավ. Գուր. Օրթաք. Պէշիկ. Գասպաթաշ։	23
2 30	Արնավ. Գուրուչ. Օրթաք. Պէշիկ. Գասպաթաշ։	22
10 15	Արնավուտքէյէն ուզզակի կամուրջ։	23

Ա-ՆՈՒՇ ԷՆԷՆ

10 30	Պէյքօզ, Բաշտապ. Գանլ. Ա. Հիսար, Գանտ. Վանիք. Զէնկ. Պէյլ. Գուզկ. (Աժան գնով)։	12
11 15	Պէյքօզ, Բաշտապ. Ր. Փաշա մահ. Գանլըճա, Ա. Հիսար, Գանտիլլի, Վանիքէյ. Զէնկէքէյ, Պէյլերպէյ. Գուզկ. (Ուրբաթ օրերը ժամ 11 1/2 ին)։	19
11 30	Արնավ. Վանիքէյ, Զէնկէլ. Պէյլեր. Գուզկ. Գասպ։	2
12	Ր. և Ա. Գավաղէն Մէզար. Պէյլիքա. Թար. Պէյքօզ, Բաշտապ. Գանլ. Ա. Հիսար, Գանտ. Վանիք. Զէնկէլ. Պէյլեր. Գուզկ. [Ուրբաթ օրերը ժամ 12 1/2 ին)։	17
2	Պէյլիւքա. Պէյքօզ, Բաշտապ. Գանլ. Ա. Հիսար, Գանտ. Վանիք Զէնկ Պէյլ. Գուզկ. Գասպ։ (Բացի ուրբաթէ)։	34
3 45	Պէյքօզ, Բաշտապ. Գանլ. Ա. Հիսար, Գանտ. Վանիք. Զէնկ. Պէյլ. Գասպաթաշ։	19
8 45	Պէյլիքա. Պէյքօզ, Բաշտապ. Գանլըճա, Ա. Հիսար, Գանտ. Վանիք. Զէնկէլ. Պէյլերպէյ, Գուզկ. Իսկ.	25

ԿԱՄՈՒՐՋԷՆ ԵԼՆՈՂ ՇՈԳԵՆԱՒՆԵՐԸ

Ժամ	Լուրջպոլսոյ եղանակ	Թիւ
12 30	Գասպ. Իսկ. Պէշիկ. Գուզկ. Օրթ. Պէյլ. Զէնկ. Արնավ. Գանտ. Ա. և Ր. Հիսար, Գանլը Էմիրկէն, Լենիք. Պէյքօզ, Թարապ. Պէյլիք. Լենիմահ։	2
12 45	Պէշիքթ. Օրթաք. Արնավ. Ր. Հիսար, Էմիրկ. Լենիք Թարապ. Մէզար.	28
1 30	Պէշիկ. Օրթաք. Արնավուտ. Ր. Հիսար Պոյաճ. Լենիք. Թարապ. Պէյլիք. Մէզարպ. Ր. և Ա. Գավաղ։	32
3	Գասպաթաշ, Պէշիկ. Օրթաք. Գուր. Արնավ. Պէպէք, Հիսար, Էմիրկ. Լենիք. Թար. Պէյլիք. Մէզր. Լենիմ.	18
5	Պէշիկ. Օրթաք. Արնավ. Պէպէք Ր. Հիսար, Պոյաճ. Էմիրկ. Լենիք. Պէյքօզ, Թարապ. Պէյլիք. Մէզրպ. Ր. և Ա. Գավաղ։	20
6 15	Իսկ. Պէշիկ. Գուզկ. Օրթաք. Պէյլ. Զէնկ. Արնավ. Գանտ. Ր. Հիսար, Պոյաճ. Լենիք. Թար. Պէյլիք։	25
8	Պէշիկթաշ, Օրթաք. Արնավ. Ր. Հիսար, Էմիրկ. Լենիք. Թարապ. Պէյլիքա. Մէզարպուրնու։	22
9 30	Պէպէք, Ր. Հիսար, Պոյաճ. Սթէն. Լենիք. Թարապ. Պէյլիքա. Մէզարպ. Լենիմահ։	28
10	Պէպէք, Ր. Հիսար, Էմիրկ. Սթէն. Լենիք. Թարապ. Պէյլիք Մէզար. Լենիմահ։	32
10 30	Պէշիկ, Օրթաք. Արնավ. Պէպէք, Ր. Հիսար, Էմիրկ. Պոյաճ. Լենիք. Թարապ. Պէյլիքա. Մէզարպ. Լենիմ.	18
10 45	Գուզկ. Պէյլերպ. Արնավ. Ր. Հիսար Էմիրկ. Լենիք. Թարապ. Պէյլիքա. Մէզար. (Բացի ուրբաթէ)։	34
11 15	Գուրուչ. Արնավ. Պէպէք, Ր. Հիսար, Պոյաճ. Էմիրկ. Սթէն Լենիքէյ, Թարապիա, Պէյլիքա. Լենիմահալլէ։ (Աժան գնով)։	20

ԱՐՆԱՎՈՒՏ ԷՆԷՆ

12 15	Ուզզակի Արնավուտքէյ։	25
1	» »	23
1 45	» »	22
9 30	Գասպ. Պէշիկ. Օրթաք. Գուր. Արնավ.	23
11 15	Գասպաթ. Պէշիկ. Օրթաք. Գուրուչ. Արնավ։	25
11 40	Պէշիկթաշ, Օրթաք. Գուրուչ. Արնավ։	23
12	Պէշիկթաշ, Օրթաք. Գուրուչ. Արնավուտ։	2

Ա-ՆՈՒՇ ԷՆԷՆ

2	Իսկ. Գուզ. Պէյլ. Զէնկ. Վանիք. Գանտ. Ա. Հիսար, Գանլ. Բաշտապ. Պէյքօզ։	19
9 45	Գուզկ. Պէյլերպ. Զէնկ. Վանիք. Գանտ. Ա. Հիսար, Գանլ. Բաշտապ. Պէյքօզ, Մէզարպ. Ր. և Ա. Գավաղ։	17
10 30	Գասպաթ. Պէյլ. Զէնկ. Վանիք. Գանտ. Ա. Հիսար, Գանլ. Ր. Փաշա մահ. Բաշ. Պէյքօզ, Թարապ. Պէյլիքա. (Ուրբաթ օրերը Գուզկ.)	19
11 15	Գուզկ. Պէյլ. Զէնկ. Վանիք. Գանտ. Ա. Հիսար, Գանլ. Բաշտապ. Պէյքօզ։ (Աժան գնով)։	12
11 30	Գասպաթ. Գուզկ. Պէյլ. Զէնկ. Վանիք. Պէպէք։	22

Լրագիրս ամեն օր կը հրատարակուի՝ բայց Ի կիրակի և սուն օրերէ։

Բաժանորդագրութեան տեղն է Գալաթիա Սանտրզ-ճըլար Հատտէսի թիւ 198, Նօրօ խան Մասխի խանութատունը։ Իսկ դաւառաց մէջ հետևեալ հոգաբարձուաց դրասենեակները.

ԶՄԻՒՌՆԻԱ. Սահեան Էֆ. Տէտէեան.
ՆԻԿՈՄԻԴԻԱ. Խասով » Էսկիճեան.
ՊՐՈՒՍԱ. Սահեան Էֆ. Թանկիրեան.
ՌՈՍՈՍՊՕ. Արժ. Տ. Արիստակէս աւագ քահանայ Ֆէշլեան.
ԱԴՐԻԱՆՈՒՊՕԼԻՍ.
ՍԱՄՍՈՒՆ.
ՏՐԱՊԻԶՈՆ. Ս. Էթմէքճեան Էֆէնտի.
ԱՄԱՍԻԱ.
ՍԵԲԱՍՏԻԱ. Նազարէթ Էֆ. Ց. Խաթամպօլճեանց.
ԵՒԴՈԿԻԱ.
ՔԱՐԲԵՐԴ և ՏԻՐՍԻՄ. Կիրակոս Էֆ. Ս. Ղազանճեան.
ԵՐԶՆԿԱ. Թադէոս Էֆ. Բաղրատունի.
ԿԱՐԻՆ. Կարապետ » Զաքարեան.
ՄՈՒՇ. Մկրտիչ » Փոթիկեան.
ՎԱՆ.
ԲԵՐԻԱ. Սեդրակ » Խարաճեան.
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ. Թովմաս Էֆ. Թաշճեան.
ԵԴԵՍԻԱ. Դիմրդ Էֆ. Ոսկերչեան.
ՄԱՐԱՇ.
ՖՕՌՇԱՆ. Ֆէրհատ աղա Ս. Ֆէրհատեան.
ՏՓԽԻՍ. Պ. Նիկողայոս Տ. Ղևոնդեան.
ԿԱԼԿԱԹԱ. Պետրոս աղա Հէրմիանեան։

"Կատարելութիւն"։

ՄԸՏԱՍԱ Ս. Ա. ԱԼԼԷՆԻՆ

Աշխարհածանօթ Մաղ Նորոգողը։

(MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER.)

Երբէք չվախիր նորոգելու Ալլոր Մաղը իր երիտասարդական գոյնին, ընծայելով անոր նոր կեանք, աճում, և փայլուն գեղեցկութիւն։ Իր արդիւնքը սաստիկ և կատարեալ է, շուտով վանելով ալևորութիւնը։ Ներկ մը չէ։

Մ'իշտ կը հաստատէ ինքնին իրը մաղին բնական զօրացուցիչը։

Գլխաւոր Մթերանոցը (Մաղազան) է,—

114 AND 116 SOUTHAMPTON ROW, Լոնտոն, Անգլիայ։

Կը ծախուի ամեն կեղծամավաճառներէն, Անուշահոտ Իւղավաճառներէն, և Անգլիացի Դեղավաճառներէն։

Կ. Պոլիս Ս. Քանդիւք Եղբարց քով, Ֆարմասի Պրիմանիք Բերա Մեծ փողոց։

ՕՃԱՌ

UNITED SERVICE SOAPTABLET

Անուշահոտ օճառ, մորթը կը կակուղցնէ ու լեղի ջուրով ալ կը վրիպի, տեսակը խիստ աղնիւ ու գինը չատ ժան է. կը ծախուի Կ. Պոլիս Դ. Ղալաթիա Մինասեան և ընկերաց Ամերիկայի մագազան։